

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 115.1 Ապահովագրական գաղտնիքի տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով սահմանված դեպքերում և կարգով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց վերաբերյալ ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ապահովագրական գաղտնիքի հրապարակում չի համարվում:

Հոդված 118. Ապահովագրական գաղտնիքի տրամադրման ենթակա տեղեկությունների սահմանները

1. Ապահովագրողը, վերաապահովագրողը, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձն և Բյուրոն ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները, սույն օրենքի 112-~~145~~115.1-րդ հոդվածներին համապատասխան, տրամադրում են միայն իրենց հաճախորդի, իսկ Բյուրոն՝ իր անդամների հաճախորդների վերաբերյալ: Ընդ որում, եթե հաճախորդների՝ ապահովագրողի, վերաապահովագրողի, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի կամ Բյուրոյի մոտ պահվող փաստաթղթերում նշված են այլ անձանց կամ կազմակերպությունների անուններ կամ անվանումներ, գործարքի (գործառնության) պայմաններ և նման այլ տեղեկություններ, դրանք սույն հոդվածի իմաստով համարվում են հաճախորդի վերաբերյալ տեղեկություններ:

2. Ապահովագրողը, վերաապահովագրողը, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձն և Բյուրոն իրավունք չունեն իրենց հաճախորդի վերաբերյալ սույն օրենքով սահմանված կարգով տեղեկություններ տրամադրելիս վերջինիս կնքած պայմանագրերի կամ այլ գործարքների (գործառնությունների) կողմ հանդիսացող անձանց և կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու, եթե դրանք չեն պահանջվել սույն օրենքով սահմանված կարգով:

(118-րդ հոդվածը լրաց. 18.05.10 ՀՕ-64-Ն)